ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀՐԱՎԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սահմանադրության ընդունումն արժևորվեց ՀՀ իրավական համակարգում դատական իշխանության ինստիտուցիոնալ և գործառութային որոշակի փոփոխություններով, որոնց շարքում պետք է առանձնացնել նաև վճռաբեկ դատարանի սահմանադրահիրավական նոր կարգավիճակի հստակեցումը՝ պայմանավորված մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու խնդրի իրացման անհրաժեշտությամբ: ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 163, 171 և 172 հոդվածներով ոչ միայն սահմանվեց հայրենական դատական համակարգի աստիճանակարգությունը, այլև գործառութային առումով հստակ սահմանազատում մտցվեց յուրաքանչյուր դատական ատյանի գործունեության սահմանադրահիրավական հիմքերի, նպատակների և խնդիրների միջև: Այսպես, ՀՀ Սահմանադրության 171 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (1-ին և 2-րդ մասեր): Սրանից հետևում է, որ վճռաբեկ դատարանի կողմից իրականացվող դատական վերանայման գործառույթն աներկբայորեն պետք է ուղղված լինի վերջինիս սահմանադրահիրավական այն խնդիրների իրացմանը, որոնք գտնվում են փոխադարձ սերտ կապի մեջ, քանի որ առանց մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության վերջնական նպատակը խաթարող նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումները) վերացնելու անհնար է ապահովել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և դատական պրակտիկայի միասնականությունը: Ինչպես տեսնում ենք, վճռաբեկ դատարանի սահմանադրահիրավական կարգավիճակի և խնդիրների ամրագրումը սահմանափակում է այս ատյան մուտք գոր-

ծելու հնարավորությունը, և եթե վերաքննիչ դատարանը բողոքարկման արդյունքում օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատական ակտը վերանայող և դատական սխալը վերացնող (ուղղող) ատյան է, ապա վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայումը պայմանավորված է ոչ միայն դատական սխալի առկայությամբ, այլև օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու կամ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու անհրաժեշտությամբ:

Առանձնահատուկ ուշադրության պետք է արժանացնել այն հարցը, թե մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրահիրավական խնդրի ամրագրումը որքանով է ուղղված «դատարանի իրավունքի» և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու պայմանների մատչելիության ողջամիտ սահմանափակումների կիրարկմանը[1], քանի որ սահմանադրահիրավական նոր կարգավորման պայմաններում վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայումը կարող է ընդհանրապես օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդրի իրացմանը միտված չլինել: Ընդ որում, ՀՀ դատավարական օրենսդրությունը հստակ չափորոշիչներ չի սահմանում, թե որ դեպքերում մարդու իրավունքների և ազատությունների խախտումները պետք է համարել հիմնարար, կամ բողոքաբերը վճռաբեկ բողոքում ինչպիսի փաստարկներով է պարտավոր հիմնավորել այդպիսի խախտումների «հիմնարար» լինելու հանգամանքը: ՀՀ դատական օրենսգրքի[2] 50.1 հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[3] (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 234 հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ՝ 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ՝ 2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ՝ 3) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք: Ավելին, նշված հոդվածներում սահմանվում է, թե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը երբ կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, սակայն որևէ դրույթ չկա մարդու իրավունքների և ազատություն-

[1] Տե՛ս օրինակ՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ». Case of Brualladel a Torrev. Spain, judgment, 19 դեկտեմբերի 1997 թվական, կետ 33, Edificacion es March Gallego S.A. v. Spain, judgment, 19 փետրվարի 1998 թվական, կետ 34, ինչպես նաև «Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 07 փետրվարի 1995 թվականի քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ինստիտուտների և ընթացակարգերի ներդրման ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ» անդամ պետություններին ուղղված NR (95) 5 առաջարկությունների 5-րդ կետի g) և e) ենթակետեր:

[2] ՀՕ-135-Ն, ընդունվել է 21.02.2007թ., ուժի մեջ է մտել 18.05.2007 թ., ՀՀՊՏ 2007.04.18/20(544):

[3] ՀՕ-247, ընդունվել է 17.06.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

ների հիմնարար խախտումների բովանդակությունը բացահայտելու կամ հստակ չափանիշներ սահմանելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ բազմիցս քննադատության է արժանացել դատավարության օրենքներում «հիմնարար խախտում» գնահատողական եզրույթի գործածման փաստը, որովհետև նման մոտեցմամբ անհարկի ընդլայնվում է դատական հայեցողության շրջանակը՝ հակասելով վճռաբեկության ինստիտուտի էությանը, իսկ վճռաբեկ ատյանը դառնում է դատական ակտերի իրավաչափությունն անվերապահորեն ստուգող դատական ատյան[4]: Նման տեսակետը պայմանավորված է վերաքննության և վճռաբեկության ինստիտուտների նպատակների միասնականությամբ և խնդիրների նույնացմամբ, երբ երկու դատական ատյաններն էլ դիտվում են զուտ որպես ստորադաս դատարանների ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգող, դատական սխալը վերացնող կամ ուղղող դատարաններ: Հենց այս հանգամանքով է պայմանավորված դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերի ընդհանրությունը, որի պայմաններում ստորադաս դատարանի կողմից թույլ տրված խախտումները վերաքննիչ դատարանի կողմից չվերացնելու պարագայում դրանք վերացնում է վճռաբեկ դատական ատյանը:

Քիչ չեն նաև այս դիրքորոշման հակառակորդները, որոնց կարծիքով վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայումը հնարավոր է միայն իրավունքի նորմերի էական և հիմնարար խախտումների պարագայում, երբ չեն պահպանվել քաղաքացիական դատավարության սկզբունքներն ու հիմնադրույթները, ինչպես նաև կոպտորեն խախտվել են գործին մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը[5]:

Ընդունելով դատական համակարգի նպատակային միասնականությունը, այն է՝ խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը՝ անհրաժեշտ է հատուկ նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դատական ատյաններն այնուամենայնիվ տարբեր խնդիրներ ունեն և առանձին գործառույթներ են իրականացնում: Եթե առաջին ատյանի դատարանը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացնում է գործն ըստ էության քննելու և լուծելու միջոցով, ապա վերաքննիչ և վճռաբեկ դատարանները իրավունքների

---

[4] Տե՛ս **Алексеевская Е.** Существенное нарушение норм права как основание для отмены или изменения судебных постановлений в порядке надзора // «Российская юстиция», 2003, № 6, էջ 33-36, **Яновский Я.** Вопросы гражданского процесса при рассмотрении дел в порядке надзора // «Социалистическая законность», 1970, № 10, էջ 21-24 :

[5] Տե՛ս **Треушников М. К.** Проект нового Гражданского процессуального кодекса РФ: концептуальные проблемы // "Вестник МГУ". Серия 11. Право. 1995, № 4, էջ 43-46, **Кац С. Ю.** Возбуждение кассации и производства в порядке надзора по гражданским делам. М., 1965, էջ 29, **Алискеров М. А.** Проблемы кассационого производства по гражданским делам; дисс. … к. юр. наук. М., 2000, էջ 30- 42:

պաշտպանությունն իրականացնում են դատական ակտը վերանայելու, դրա օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու միջոցով: Ընդ որում, դատական վերանայման վերաքննության և վճռաբեկության վարույթները միմյանցից էականորեն տարբերվում են թե՛ ինստիտուցիոնալ (ինչը պայմանավորված է այս դատարանների սահմանադրաիրավական տարբեր կարգավիճակներով և խնդիրներով), թե՛ գործառութային (ինչը պայմանավորված է վերաքննության և վճռաբեկության սահմաններով) առումներով: Ուստի քննարկվող ինստիտուտի ռուսաստանյան իրավակարգավորման առանձնահատկությունների վերլուծության հիման վրա հայրենական վճռաբեկության սահմանադրաիրավական խնդրի իրացման վերաբերյալ հետևություններ անելն այդքան էլ տեղին չէ: Ասվածը փաստարկված և ամրագրված է նաև հենց նույն ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387 հոդվածում և նշված հոդվածում տեղ գտած իրավանորմի վերաբերյալ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի որոշումներում, որոնց համաձայն՝ վճռաբեկության կարգով դատական ակտի բեկանման հիմք կարող են լինել նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այնպիսի էական խախտումները, որոնք ազդել են գործի ելքի վրա, և առանց դրանք վերացնելու անհնար են խախտված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի վերականգնումը, ինչպես նաև օրենքով պահպանվող հանրային շահերի պաշտպանությունը[6]:

ՀՀ-ում վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառույթը որոշակիորեն տարբերվում է նաև մայրցամաքային իրավական համակարգում դասական վճռաբեկության ֆրանսիական օրինակից, որը, լինելով զուտ իրավունքի դատարան, սահմանափակված է առավելապես օրենքի միատեսակ կիրառության, դատական պրակտիկայի միասնականության ապահովման գործառույթով[7] և, ի տարբերություն դատական վերանայման գերմանական կամ ավստրիական մոդելի, ռևիզիոն տարրեր չի պարունակում[8]:

Մեր կարծիքով, ՀՀ-ում վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակից բխող խնդիրների իրացումը բոլորովին այլ մոտեցում և բողոքի ընդունելիության պայմանների իրավակարգավորում է պահանջում: Ընդ որում, արդարացված չի կարելի համարել դատավարության օրենքում դատական ակտերը վերաքննության և վճռա-

---

[6] Տե՛ս «Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейний научно практический)». М., 2015, էջ 564, Постановление Пленума Верховного Суда от 11 декабря 2012 г. № 29 «О применении судами норм гражданского процессуального законодательства, регулирующих производство в суде кассационой инстанции», п 1:

[7] Տե՛ս «Новый Гражданский процессуальный кодекс Франции». Киев, 2004, էջ 255: Նշված փոփոխությունները մտցվել են 12 մարտի 1992 թ. № 92-228 դեկրետով:

[8] Տե՛ս **Энгельман И. Е**. Курс русского гражданского судопрпизводства. Юрьев, 1912, էջ 399:

բեկության կարգով բեկանելու առանձին հիմքերի սահմանումը: Այսպես, վճռաբեկ դատարանը պետք է իրավական գնահատական տա և ուղղի (վերացնի) բոլոր այն սխալները, որոնք չի ուղղել կամ չի վերացրել վերաքննիչ դատարանը, կամ էլ՝ եթե այդպիսի սխալները թույլ են տրվել հենց այս դատական ատյանում: Հետևում է, որ դատական ակտի բեկանման հիմքերն ընդհանուր են վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյանների համար: Բացի այդ, եթե ստորադաս դատական ատյանում թույլ են տրվել իրավունքի հիմնարար խախտումներ, ապա վերադաս դատարանի համար բողոքի քննության արդյունքում այդ խախտումները վերացնելն ուղղակի պարտականություն է, սահմանադրահիրավական առաքելություն: Ուստի ավելի շատ պետք է ուշադրություն դարձնել գործի ելքի և գործին մասնակցող անձանց (գործին մասնակից չդարձված անձանց) իրավունքներին և պարտականություններին, իրավունքի նորմերի խախտումների ազդեցության գնահատմանը, այլ ոչ թե սահմանափակվել այն հանգամանքի դիտարկմամբ, թե քաղաքացիական գործով ինչ իրավունք է խախտվել:

Գտնում ենք, որ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու՝ վճռաբեկ դատարանի սահմանադրահիրավական խնդրի բովանդակությունը բացահայտող չափորոշիչները պետք է արտացոլված լինեն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու օրենսդրական պայմաններում, այլ ոչ թե ներկայացվեն դատական ակտի բեկանման հիմքերի շրջանակներում: Դատավարության օրենքում դատական ակտերի բեկանման հիմքերի սպառիչ ցանկ սահմանելը գործնականում անհնար է և աննպատակահարմար: Ընդորում, անընդունելի պետք է համարել նաև այն մոտեցումը, որի համաձայն՝ իրավունքի հիմնարար խախտում են դիտվում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների խախտումները, որի պայմաններում գործին մասնակցող անձինք վճռաբեկ դատարան մուտք գործելու անսահմանափակ հնարավորություն են ստանում՝ շրջանցելով իրավունքի դատարանին բնորոշ դատավարական առանձնահատկություններն ու այս ատյանի առջև դրված սահմանադրահիրավական խնդիրները: Այսպես, արդար դատաքննության իրավունքը ՀՀ Սահմանադրության 63 և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածներով ընդգրկված է մարդու հիմնական իրավունքների շրջանակներում: Սրանից հետևում է, որ արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող յուրաքանչյուր օրգանական կամ գործառութային տարրի խախտման պարագայում գործին մասնակցող անձը վճռաբեկ դատարան մուտք գործելու հնարավորություն է ստանում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր բազմաթիվ որոշումներով ձևավորած նախադեպային իրավունքի

շրջանակներում բացահայտել է արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերը, որոնք ուղղակիորեն շարադրված չեն Կոնվենցիայի 6 հոդվածի տեքստում: Դրանց համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ գործին մասնակցող անձինք դատական իշխանության մարմիններից առաջին հերթին օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունք ունեն[9]:

Հարկ է նշել, որ պետությունները նախ և առաջ պարտավոր են ապահովել արդար դատաքննության իրավունքի տարրերի ձևական իրացումը: Օրինակ, եթե դատարանը պատճառաբանել է դատական ակտը, ապա պատճառաբանված դատական ակտ ստանալու՝ գործին մասնակցող անձի իրավունքը համարվում է պահպանված՝ անկախ այն հանգամանքից՝ դատարանը ճիշտ է պատճառաբանել դատական ակտը, թե ոչ: Ուստի առաջին հերթին պետք է խոսել արդար դատաքննության իրավունքի պահանջների ձևական պահպանման մասին: Ընդ որում, այս դեպքում հիմնարար կարելի է համարել իրավունքի նորմերի այն խախտումները, որոնք հանգեցնում են արդար դատաքննության իրավունքի տարրերի ձևական խախտման: Այսպես, օրինակ՝ կողմերի հավասարության պայմաններում գործի քննության իրավունքը ենթադրում է ձևական հավասարության պայմաններում գործի քննության պահանջ, քանի որ յուրաքանչյուր կողմ օրենքով իրեն վերապահված իրավունքներից օգտվում է սեփական հնարավորությունների սահմաններում[10]: Այսինքն, արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող յուրաքանչյուր տարրի ձևական խախտման պարագայում գործին մասնակցող անձինք վճռաբեկ ատյան «մուտք գործելու» հնարավորություն են ունենում:

Ասվածից հետևում է, որ վճռաբեկ դատարանի կողմից բողոքի քննության ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է հիմք ընդունել ոչ թե գործին մասնակցող անձի կամ քաղաքացիական շրջանառության մասնակցի այն իրավունքի բնույթը, որը խախտվել է, այլ իրավական նորմի խախտման բնույթը, որի հետևանքով խաթարվել են մարդու (գործին մասնակցող կամ գործին մասնակից չդարձված անձի) հիմնական իրավունքն ու ազատությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենս-

---

[9] Տե՛ս **Piter van Dijk**, **Fried van Hoof, Arjen van Rijn, Leo Zwakk**, Theory and practice of the european convention on human rights, Intersentia, Antwerpen, Oxford, 2006, p. 605, **Stavros, Stephanos**, The Guarranties for Accused Persons under Article6 of the European Convention on Human Rights, Martinus Nijhoff Publishers, Dodrecht/Boston/London, 1993, էջ 259-260, Ինչպես նաև տե՛ս case of Hadjianastassiou v. Greece, judgment, 16 դեկտեմբերի 1992 թվական, կետ 33, case of Van de Hurk v. Netherlands, judgment, 19 ապրիլի 1994 թվական, կետ 61.2, case of Helle v. Finland, judgment, 19 դեկտեմբերի 1997 թվական, կետ 60:

[10] Տե՛ս **Philip Leach**, Taking a case ot the European court of Human Rights, second edition, oxford, university press, 2005, էջ 256, case of Beer v. Austria, judgment, 06 փետրվարի 2001 թվական, կետ 18:

գրքում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները սահմանելիս անհրաժեշտ է առավելագույնս խուսափել գնահատողական այնպիսի եզրույթներ գործածելուց, որոնք անհարկի կընդլայնեն դատական հայեցողության շրջանակը այն աստիճան, որ իրավակիրառ պրակտիկայում կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ: Հետևաբար անհրաժեշտ է դատավարության օրենքում կոնկրետ սահմանել, թե որ դեպքերում են իրավունքի նորմերի խախտումները համարվում հիմնարար, և վճռաբեկ դատարանը երբ է պարտավոր բողոքն ընդունել վարույթ: Այսինքն, առաջնահերթ պետք է բացահայտել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների դրսևորումները, որոնք միանշանակորեն տարբերվելու են դատավարության տարբեր տեսակներում: *Մեր կարծիքով, մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումներ են նյութական և դատավարական իրավունքի նորմերի այն խախտումները, որոնք հանգեցնում են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների անիրացվելիության կամ խաթարման: Այդպիսի խախտումներն ուղղակիորեն հակասության մեջ են մտնում քաղաքացիական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հիմնադրույթների և վերջնական նպատակների հետ, անխուսափելիորեն ազդում են կամ կարող են ազդել գործի ելքի և արդարադատության վերջնական արդյունքների վրա:* Ճիշտ է, գործնականում օրենսդրական մակարդակով անհնար է սպառիչ թվարկել այդպիսի խախտումների մասնավոր դրսևորումները, սակայն կարելի է մշակել հստակ չափանիշներ և օրենսդրական ձևակերպումներ, որոնք հնարավորություն կընձեռեն բողոքաբերին հիմնավորելու վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանի կամ վարույթ ընդունելու հիմքի առկայությունը, իսկ վճռաբեկ դատարանի իրավաչափ վարքագիծն էլ կդառնա կանխորոշելի:

Մեր կարծիքով, մարդու իրավունքների և ազատությունների խախտումները հիմնարար կարելի է համարել բոլոր այն դեպքերում, երբ առկա են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր, մասնավորապես՝ եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, ով պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել, կամ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից մեկի բացակայությամբ, որը չի տեղեկացվել դատական նիստի վայրի և ժամանակի մասին, կամ դատական ակտը ստորագրված, կնքված չէ, կամ ստորագրված կամ կնքված է ոչ այն դատավորի կողմից, որը կայացրել է դատական ակտը, կամ դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը, կամ արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն

ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, գործի քննության ընթացքում խախտվել է դատավարության լեզվի սկզբունքը, դատական ակտը չունի պատճառաբանական մաս, դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վրա, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն վերջինս չի ցանկացել ներգրավվել գործին, ինչպես նաև՝ եթե ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու կամ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու հիմք: Դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերն արդարադատության այնպիսի արատներ են, որոնք անխուսափելիորեն ազդում են մարդու իրավունքների և ազատությունների վրա, սակայն չեն կարող ամբողջությամբ սպառել իրավունքների հիմնարար խախտումների դրսևորումները: Ինչպես արդեն նշվել է, վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայման համար իրավունքի նորմի խախտումը պետք է լինի այնպիսին, որ հանգեցնի մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խաթարման: Այսպես, դատարանի կողմից ապացուցման բեռի ոչ ճիշտ բաշխումը դատավարական նորմի խախտում է, որը կարող է հանգեցնել գործի սխալ լուծման: Սակայն գործին մասնակցող անձի վրա որևէ փաստի ապացուցման այնպիսի բեռ դնելը, որպիսին ապացուցելու պարտականություն վերջինս օրենքով չի կրում, հակասում է հավասարության և մրցակցության պայմաններում գործի քննության սկզբունքին և հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի էության խաթարման: Ուստի վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանների կամ վարույթ ընդունելու հիմքերի շրջանակներում առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների սահմանումն ու բովանդակությունը, ինչպես նաև հնարավորինս սպառիչ ներկայացնել դրանց դրսևորումները: Ընդ որում, վճռաբեկ բողոքում իրավունքի խախտման հիմնարար լինելու հանգամանքը հիմնավորելու պարտականությունը կրելու է բողոքաբերը, ինչը վճռաբեկ դատարանին հնարավորություն է ընձեռելու պատշաճորեն գնահատել գործի ելքի և գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի վրա այդպիսի խախտումների ազդեցությունը, դատավարական ներգործության համապատասխան միջոցների կիրառմամբ ուղղելու կամ վերացնելու դատական սխալը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դատական սխալն ուղղելու և գործին մասնակցող անձանց իրավունքի խախտումները վերացնելու սահմանադրաիրավական խնդրի իրացման համար վճռաբեկ ատյանին օժտել է անհրաժեշտ և բավարար գործիքակազմով, որն ամրագրված է վերջինիս լիազորությունների շրջանակներում:

Հիմք ընդունելով վերը ասվածը, առաջարկում ենք ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի նախագծի 357 հոդվածի 1-ին մասում որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու ինքնուրույն հիմք նախատեսել. «եթե քաղաքացիական գործով թույլ է տրվել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում(ներ)», ինչպես նաև սահմանել, որ մարդու իրավունքների և ազատությունների խախտումները համարվում են հիմնարար, եթե քաղաքացիական գործով առերևույթ առկա են նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք խաթարում են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները և հանգեցնում են դրանց անիրացվելիության, այդ թվում՝

1. եթե առկա է դատավարության օրենսգրքի 329 հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, կամ

2. առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որ կարող էր ազդել գործի ելքի վրա։

Բանալի բառեր – *վճռաբեկ դատարան, իրավական նորմի հիմնարար խախտում, բեկանման անվերապահ հիմքեր, սահմանադրահիրավական խնդիր, վճռաբեկ վարույթ, բողոքարկման պայմաններ, գործը վարույթ ընդունելու հիմքեր*

ВАГЕ ОГАННИСЯН – *Реализация Кассационным судом конституционно-правовой задачи – устранить в гражданском процессе фундаментальные нарушения прав и свобод человека.* – В статье подробно проанализировано, как в гражданском процессе реализуется конституционно-правовая задача по устранению фундаментальных нарушений прав и свобод человека. Всесторонний анализ статуса Кассационного суда показывает, что разумные ограничения доступа к нему обусловлены необходимостью решить поставленную перед ним конституционно-правовую задачу. Специально подчёркнуто, что, принимая жалобы на рассмотрение, суд обязан руководствоваться сущностью нарушения правовой нормы, в результате которого пострадали права и свободы человека (лица, участвующего в деле или не привлечённого к участию в нём). Предложено предусмотреть в проекте Гражданского процессуального кодекса РА самостоятельную основу для принятия кассационной жалобы в производство: “если в гражданском деле было допущено фундаментальное нарушение прав и свобод человека”. Кроме того, предлагается установить, что нарушения прав и свобод человека считаются фундаментальными, если в гражданском деле были попраны основные права человека, закреплённые в Конституции РА и международных договорах, или очевидно была допущена судебная ошибка.

Ключевые слова: *Кассационный суд, фундаментальное нарушение правовой нормы, безусловное основание для отмены, конституционно-правовая задача, кассационное производство, условие обжалования, основание для принятия в производство*

VAHE HOVHANNISYAN – *Realization of Constitutional-legal Task of Fundamental Human Rights Violations Elimination in Civil Procedure by the Cassation Court.*– Specifics of realization of constitutional - legal task of human rights and freedoms violations elimination in civil procedure have been thoroughly analyzed in the article. In the result of comprehensive study of constitutional legal status of cassation

court the author has revealed that conditions and reasonable limitations for access to the cassation court are primarily conditioned by the necessity to realize constitutional legal issues of the latter and directly reflect their particular manifestations. It has specifically been underlined that while stipulating admissibility criteria for cassation appeal by the Cassation court not the nature of violated right of person engaged in civil case or civil turnover participant should be considered, but the nature of violation of legal norm resulting in undermining of human (person participating or not engaged in the case) right and freedom. It has been recommended in part 1 Article 357 of the RA Civil procedure draft to provide an independent ground for admitting cassation appeal: "if a fundamental violation of human rights and freedoms has been taken place in civil case", as well as to state that human rights and freedoms violations are considered fundamental, if in civil case there are such violations of material or procedural legal norms, which undermine fundamental human rights enshrined in the Constitution and international treaties and lead to impossibility of its realization, including:

1. If one of the grounds provided in part 1 Article 329 is present, or
2. a prima facie judicial error has been made, which could affect the outcome of the case.

Key words: *Cassation court, fundamental violation of legal norm, unconditional basis for overruling, constitutional - legal issue, cassation process, condition for appeal, admissibility ground*